

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի և Բելառուսի Հանրապետության Մոզիլյովի շրջանի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը և Բելառուսի Հանրապետության Մոզիլյովի շրջանը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով համագործակցության համար իրավահավասար և վստահելի հարաբերություններ ստեղծելու և զարգացնելու մտադրությունից;

Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող տարբեր բնագավառներում համագործակցությանը նպաստող պայմանագրերին համապատասխան;

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի և Բելառուսի Հանրապետության Մոզիլյովի շրջանի միջև հաստատված բարեկամական հարաբերությունները, պայմանավորվեցին հետևյալի մասին՝

Հոդված 1

Կողմերը ձգտելու են զարգացնել երկարաժամկետ և բազմակողմանի առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային կապեր՝ հիմնվելով իրավահավասարության, փոխըմբռնման, հարգանքի և վստահության վրա:

Հոդված 2

Կողմերը աջակցելու են Բելառուսի Հանրապետության Մոզիլյովի շրջանի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տնտեսվարող սուբյեկտների միջև կոնտակտներ հաստատելուն՝ փոխշահավետ համագործակցություն խրախուսելու նկատառումով, առանձնակի ուշադրություն դարձնելով արտադրական կոոպերացիային և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը:

Հոդված 3

Կողմերը աջակցելու են տարբեր ձևերով տնտեսական համագործակցությունը իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին, մասնավորապես՝ համատեղ նպատակային ծրագրերի և նախագծերի մշակման և իրականացման միջոցով, զարգացնելով ներդրումային համագործակցությունը, անցկացնելով ցուցահանդեսային-տոնավաճառային միջոցառումներ:

Հոդված 4

Կողմերի փոխազդեցությունը իրականացվելու է գործող պայմանագրերի, համաձայնագրերի, արձանագրությունների հիման վրա, որոնք կնքվում են տնտեսվարող սուբյեկտների միջև, և դրանք ստորագրած իրավաբանական անձիք ամբողջական պատասխանատվություն են կրում իրենց ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Հոդված 5

Կողմերը կատարում են տեղեկատվության փոխանակում ձեռնարկատիրական գործունեության կարգավորման, օտարերկրյա ներդրումների, ինչպես նաև այլ՝ երկկողմանի հետաքրքրության առարկա հանդիսացող, հարցերի կարգավորման վերաբերյալ:

Կողմերը պարտավորվում են ժամանակին տեղեկացնել Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության օրենսդրություններում կատարվող փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրի կատարման վրա:

Հոդված 6

Կողմերը աջակցելու են միմյանց իրենց տարածքներում իրավաբանական անձանդ ներկայացուցչությունների բացման հարցում՝ համաձայն երկկողմ պայմանավորվածությունների, և օգնելու են նրանց ստեղծելու գործունեության համար բարենպաստ պայմաններ:

Հոդված 7

Կողմերից յուրաքանչյուրը, գործող օրենսդրությանը համապատասխան, ձգտելու է իր տարածքում ապահովել բարենպաստ պայմաններ՝ որպեսզի տնտեսվարող սուբյեկտները իրականացնեն առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցություն:

Հոդված 8

Կողմերը մտադիր են փորձի փոխանակում կատարել մշակույթի և արվեստի հաստատությունների աշխատանքի, իրենց տարածքում ազգային համայնքների ստեղծագործական գործունեության բնագավառում:

Կողմերը ստեղծելու և խորացնելու են կապը կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական պաշտպանության, սպորտի և տուրիզմի բնագավառում:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործելու է մինչև Կողմերից մեկի կողմից գործողությունը դադարելու մասին գրավոր ծանուցման ստացումը: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարում է ծանուցագիրը ստանալու պահից երեք ամիսը լրանալուն պես:


Կազմված է մեկ կողմով քաղաքում 2010 թվականի հուլիսի 28-ին երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը ռուսերեն և հայերեն լեզուներով: Երկու օրինակն էլ իրավաբանորեն հավասարազոր են: Համաձայնագրի մեկնաբանման վերաբերյալ տարաձայնություններ ծագելու դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն լեզվով կազմված տեքստին:

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի անունից՝



[Handwritten signature]

Բելառուսի Հանրապետության
Սոգիյովի շրջանի անունից՝



[Handwritten signature]